ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Դավթաշենի

բաժնի պետ

Հ.Ավետիսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Դավթաշենի բաժնի փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

04.12.2025-10.02.2026

2025թ-ի դեկտեմբերի 04-ից 2026թ-ի փետրվարի 10-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ Դավթաշենի բաժնի փորձագետ՝ **Թերեզա Մանվելի Գևորգյանիս** կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Ընդունել եմ ՀՀ քաղաքացիների անձնագրերի ժամկետը լրանալու կապակցությամբ փոխանակման, տվյալի փոփոխության կապակցությամբ, կորստյան կապակցությամբ անձնագիր ստանալու, մինչև 16 տարեկան երեխաներին առաջին անգամ անձնագրավորելու դիմումներ:
2. Իրականացրել եմ անձնագրերի մշակման և պատրաստման աշխատանքները:
3. Իրականացրել եմ ՀՀ քաղաքացիների նույնականացման քարտերի ձևակերպման գործառույթներ:
4. Իրականացրել եմ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների հաշվառման և ժամանակավոր պաշտպանության վկայականների տրամադրման գործառույթներ:
5. Իրականացրել եմ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հանրային ծառայությունների համարանիշ ստանալու և չստանալու վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելու գործառույթներ:
6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, անհատներին տրամադրել եմ անհատական հաշվառման տվյալների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:
7. Կատարել եմ բաժնի պետի կողմից տրված հանձնարարականները:
8. Կատարել եմ քարտադարանի հետ կապված արխիվային աշխատանքները:

Իրականացրել եմ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման, հաշվառումից հանման գործառույթներ:
Բոլոր գործառույթները կատարվել են սահմանված կարգով և ժամանակահատվածում:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Դավթաշենի

բաժնի փորձագետ **Թերեզա Մանվելի Գևորգյան**

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ <<.....լավ.....>>

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Դավթաշենի

բաժնի պետի
պարտականությունները
ժամանակավոր կատարող Ա.Նիկողոսյան